ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԻՆՈԳՈՐԾԻՉՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ

ք.Երևան **«24» նոյեմբերի 2023թ.**

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը և «Հայաստանի կինոգործիչների միություն» հասարակական կազմակերպությունը.

- գիտակցելով կինոարվեստի դերն ու նշանակությունը Հայաստանի Հանրապետության մշակութային քաղաքականության իրականացման, ինչպես նաև հայկական կինոյի և կինոմշակույթի միջոցով աշխարհում հայ մշակույթի հանրայնացման գործում,

- բարձր գնահատելով հայկական կինոժառանգության ստեղծման ակունքներում կանգնած և այդ ժառանգության ինստիտուցիոնալ հիշողության կրող Հայաստանի կինոգործիչների միության նախաձեռնողականությունը և ընդգրկվածությունը կինոյի ոլորտում կրթական և մշակութային բազմաթիվ ստեղծարար, նորարար նախագծերում,

- կարևորելով Հայաստանի կինոգործիչների միության՝ որպես ամենամեծ մասնագիտական համայնք լինելու հանգամանքը, ստեղծագործական կինոգիլդիաների միջոցով կինոհամայնքի առավել ընդգրկուն համախմբում իրականացնելու հնարավորությունը, ինչպես նաև վերջինիս մասնագիտական ներուժը կինոմշակույթի պահպանման և տարածման գործում,

- հաշվի առնելով միջազգային կինոկազմակերպությունների՝ ԱՊՀ երկրների, Եվրոպական միության երկրների, Ֆրանկոֆոնիայի երկրների կինոկազմակերպությունների և այլ կինոմշակութային կառույցների հետ ունեցած բազմամյա հարաբերությունները,

Որոշեցին կնքել սույն Հուշագիրը՝ հետևյալի մասին.

1. Համագործակցության նպատակը և ուղղությունները

Սույն Հուշագրի նպատակն է ապահովել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և Հայաստանի կինոգործիչների միության սերտ համագործակցությունը կինոոլորտում իրականացվող քաղաքականության բարելավման, կինոհամայնքի, այդ թվում և կինոգիլդիաների մասնագիտական, փորձագիտական, խորհրդատվական կարծիքը նախարարության կողմից իրականացվող կինոոլորտին առնչվող ծրագրերում, օրենսդրական նախաձեռնություններում համակարգված ներկայացնելու, մշակութային ժառանգության մատչելիության ապահովումը կինոոլորտում իրականացնելու, կինոծրագրերի միջոցով նախարարության կրթական և մշակութային ռազմավարական ծրագրերին աջակցելու, կինոյի միջոցով կրթական և մշակութային ստեղծարար և նորարար ծրագրեր, նախագծեր իրագործելու համար:

2. Նախատեսվում է համագործակցությունն իրականացնել հետևյալ ուղղություններով՝

ա) Կինոգործիչների միության ստեղծագործական ծրագրերի (մասնավորապես «Վերադարձ կինոյի տուն», «Մոռացված հայկական կինո», «Կինոհոբելյաններ», «Երևանը հայկական կինոյում», «Երեկոներ հայ կինոյի հետ և այլն), ստեղծարար այլ կինոնախագծերի միջոցով հայկական ժամանակակից կինոյի և կինոժառանգության հանրայնացում:

բ) Կինոգործիչների միության կրթական և մշակութային նախագծերի միջոցով հայկական կինոյի ինտեգրում դպրոցական ծրագրերում՝ համապատասխան կրթության չափորոշիչներին:

գ) Նպատակային կինոցուցադրումների, կինոհանդիպումների, քննարկումների, փառատոնային նախագծերի միջոցով հայկական կինոյի ծանոթացում սոցիալական տարբեր շերտերի, տարիքային տարբեր սեգմենտների՝ օգատործելով կինոգործիչների միության անդամ ստեղծագործողների, կինոգետների և կինոլրագրողների գիլդիայի ներուժը, նպատակ ունենալով ազդել մշակութային զարգացման վրա, ապահովել կրթական և մշակութային անընդհատ և շարունակական զարգացում:

դ) Կինոգործիչների միության միջազգային համագործակցության, միջազգային կապերի օգտագործման, միության կինոփառատոների գիլդիայի գործունեության միջոցով հայկական ժամանակակից կինոյի և կինոժառանգության տարածում արտերկրում՝ միջազգային տարատեսակ կինոփառատոներում հայկական կինոյի օրերի, շաբաթների, հետահայաց ցուցադրությունների, հայկական կինոյի ծրագրային ներկայացումների միջոցով:

ե) Կինոգործիչների միության անդամների ներգրավմամբ՝ որպես մասնագիտական ներուժի և գիտելիքների կրողների, փորձագիտական, խորհրդատվական կարողությունների կրողների, մասնակցել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կինոոլորտին առնչվող բարեփոխումների, ծրագրերի բարելավմանը, օրենսդրական բարեփոխումների օժանդակմանը:

զ) Օգտագործելով կինոգործիչների միության ենթակառուցվածքները (մասնավորապես՝ ժապավենային ֆիլմերի պահոցը, ժապավենային ֆիլմերի ցուցադրության պրոյեկցիոն համակարգը, ժապավենային ֆիլմերի մոնտաժային սեղանի առկայությունը և մասնագիտական ներուժը) նպաստել կինոժառանգության պահպանմանը և ուսումնասիրմանը, այդ ուղղությամբ մասնագիտական ներուժի զարգացմանը, նոր սերնդին գիտելիքների փոխանցմանը, մասնագիտական վերապատրաստմանը:

3. Համագործակցության պայմանները

Սույն Հուշագրով նախատեսված համագործակցության շրջանակում, Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունն ապահովում է հայկական կինոժառանգության մաս հանդիսացող խաղարկային, վավերագրական, անիմացիոն ֆիլմերի անվճար տրամադրումը Հայաստանի կինոգործիչների միությանը, դրանք Հուշագրով նախատեսված դրույթներին համապատասխան օգտագործելու նպատակով (այդ թվում և կոմերցիոն նպատակով, բացառությամբ դրանց վարձույթի, հեռարձակման, համացանցային տարածման իրականացումը) պայմանով, որ ստացված միջոցներն ուղղվելու են.

- երիտասարդ կինոգործիչների մասնագիտական զարգացման աջակցմանը՝ այդ թվում, արտերկրում վերապատրաստման ծրագրերին մասնակցությանը
- կինոենթակառուցվածքների զարգացմանը
- կինոգործիչների միության անդամների մասնակցությանը՝ արտերկրում անցկացվող միջազգային կինոփառատոներին և կինոշուկաներին, այդ թվում՝ հայկական կինոյի առաջխաղացման և միջազգային կապերի ընդլայնման նպատակով հաղորդակցության խթանմանը և կինոգործիչների ներայացուցչական դիրքավորմանը
- առանձին դեպքերում՝ կինոգործիչների միության անդամների սոցիալական խնդիրների լուծմանը:

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը աջակցում է կինոգործիչների միության համագործակցությանը ստեղծագործական բուհերի, ստեղծարար և նորարար կրթական և կինոտեխնոլոգիական հաստատությունների հետ, ապահովում է կինոգործիչների միության ներգրավվածությունը կինոոլորտին առնչվող բարեփոխումների ծրագրերին, օրենսդրական և այլ նախաձեռնություններին:

Հայաստանի կինոգործիչների միությունն ապահովում է.

- կազմակերպության անդամների, ստեղծագործական կինոգիլդիաների ակտիվ մասնակցությունը, միջազգային կապերն ու համագործակցությունները՝ Հուշագրով նախատեսված դրույթների իրագործման համար:
- կազմակերպության ենթակառուցվածքների անհատույց տրամադրումը Հայաստանի կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը՝ մասնավորապես կինոոլորտին առնչվող նախագծերի, համատեղ ծրագրերի իրականացման, քննարկումների, միջոցառումների իրականացման համար:
- կինոկրթական ոլորտի՝ մասնավորապես Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի ուսանողների, ուսանողական դեբյուտային աշխատանքների, դիպլոմային ֆիլմերի ցուցադրման համար դահլիճների անհատույց տրամադրումը, ուսանողական կինոյի հանրայնացումը, ուսանողների մասնագիտական կայացումը՝ միության անդամների մասնակցությամբ աշխատանքների քննարկման համար համապատասխան պայմանների ստեղծումը և այլն:

4. Հուշագրի ուժի մեջ մտնելը և գործողությանժամկետը

Սույն Հուշագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Սույն Հուշագրի գործողությունը կարող է դադարեցվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ կամ նրանցից մեկի նախաձեռնությամբ:

Սույն Հուշագիրը կազմված է երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավական ուժ:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար	**«Հայաստանի կինոգործիչների միություն» ՀԿ-ի նախագահ**
ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ	**ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ**